

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/2

24 մարտի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Հայկանուշ Դալլաքյանի 14.03.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 14.01.2015 թ-ի թիվ 900 որոշման դեմ:

Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության պետը 2015թ. հունվարի 14-ին կայացրել է թիվ 900 որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ ԱՁ Հայկանուշ Դալլաքյանից 100,514 դրամ (որից՝ 64,953 դրամ՝ որպես պարտադիր սոցիալական ապահովության վճար, 35,561 դրամ՝ որպես տույժ) գանձելու վերաբերյալ:

Բողոքաբերը գտնում է, որ Որոշումը ոչ իրավաչափ վարչական ակտ է՝ հետևյալ հիմնավորումներով:

Այն ժամանակահատվածում, որի համար Որոշմամբ առաջադրվել է պարտավորությունը, Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը գործունեություն չի իրականացրել և պետական գրանցման վկայականը հանձնած է եղել հարկային մարմնին, ինչը բացառում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորության առաջացումը:

Այսպես, քննարկվող ժամանակահատվածում՝ 2011-2012թ.թ. գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր լիազորված մարմնին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը (ձեռներեցը) սույն մասով սահմանված չափով նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը գործունեության ժամանակավոր դադարեցման մասին և պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հանձնելու մասին դիմումներ է ներկայացրել հարկային մարմնին 2008թ. սեպտեմբերի 12-ին: Նույն օրը հարկային տեսչության կողմից տրվել է թիվ 943 տեղեկանքը (ստացականը) առ այն, որ պետական գրանցման վկայականը հանձնվել է հարկային տեսչություն: Դրանից հետո՝ 2008թ. սեպտեմբերի 25-ին, Շահումյանի ՀՏ գանձումների բաժնի տեսուչները այցելել են գործունեության հասցե և արձանագրել, որ 2011-2012թ.թ.-ին, որի համար Որոշմամբ առաջադրվել է պարտավորություն, Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը ներկայացրել է զրոյական անհատական հաշվետվություններ:

Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը հաշվառումից դուրս է եկել 2012թ. հունվարի 12-ին: Այս հիմքը բավարար է Որոշումն անվավեր ճանաչելու համար, սակայն ներկայացվում են նաև հետևյալ լրացուցիչ հիմնավորումները:

Որոշմամբ առաջադրված պարտավորությունն իրավաչափ չէ, քանի որ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ նախկին օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի

խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո:

Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը հաշվառումից դուրս է եկել 2012թ. հունվարի 12-ին: Մինչդեռ, վիճարկվող Որոշումը կայացվել է ավելի քան երեք տարի անց՝ 2015թ. հունվարի 14-ին:

Վիճարկվող Որոշումից անհասկանալի է, թե ինչպես է գոյացել 64,953 դրամ ապառքը, չկա դրա վերաբերյալ որևէ հաշվարկ: Որոշման նկարագրական մասում նշված է, որ պարտավորությունն առաջացել է «2011թ. հունվարի և 2012թ. հունվար ամսվա նվազագույն սոց. ապ. վճարներից»: Այսինքն՝ խոսքը երկու ամսվա վճարումների մասին է: Մինչդեռ, իրավահարաբերության պահին գործող՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ մասի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամ: Եթե անգամ հաշվի չառնենք սույն վարչական բողոքում բերված վերոգրյալ փաստարկները անհասկանալի է, թե երկու ամսվա նվազագույն սոցիալական վճարն ինչպես կարող է կազմել 64,953 դրամ: Արդյունքում խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածով սահմանված՝ վարչական ակտի որոշակիության պահանջը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության պետի 2015թ. հունվարի 14-ի թիվ 900 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 13.01.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 100.514 դրամ, որն ամբողջությամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով է: Որոշման համաձայն նշված պարտավորությունը առաջացել է 2011 թ-ի հունվար և 2012 թ-ի հունվար ամսվա նվազագույն սոցիալական ապահովության վճարներից: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 14.01.2015 թ-ին ընդունվել է թիվ 900 որոշումը Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանից 100.514 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը 2008 թ-ի սեպտեմբերի 12-ին գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու և անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականը հանձնելու մասին դիմումներ է ներկայացրել հարկային մարմին: Այնուհետև, 2011 թ-ի դեկտեմբերի 20-ին Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանը հարկային մարմնից ետ է վերցրել անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականը, իսկ 2012 թ-ի հունվարի 12-ին Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի գործունեությունը դադարեցվել է (լուծարվել է):

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ 2008 թ-ի սեպտեմբերի 12-ից մինչև 2011 թ-ի դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար, այն է՝ Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի կողմից գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու և անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայականը հանձնելու պահից մինչև պետական գրանցման վկայականը ետ վերցնելու ժամանակատավածում, նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ վերոգրյալ փաստական հանգամանքների պայմաններում Ա/Ձ Հայկանուշ Դալլաքյանի մոտ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով (նվազագույն սոցիալական վճար) պարտավորություններ են առաջանում միայն 2011 թ-ի դեկտեմբեր և 2012 թ-ի հունվար ամիսների համար, որի ընդհանուր գումարը կազմում է 15.402 դրամ, այդ թվում՝ ապառք 9.953 դրամ, տույժ 5.449 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 14.01.2015 թ-ի թիվ 900 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունը՝ գումարով 100.514 դրամ, ենթակա է նվազեցման 85.112 դրամով:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ
